

28.08.2013թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Յու.Պողոսյան, Գ.Գևորգյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ):

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Գ. Նշանյան (գյուղատնտեսական համատարած հաշվառման պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ), Ա. Ավագյան (գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ), Հ.Եղիազարյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ), Ա.Դաշյան (բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ), Գ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` ինը հարց.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մարտի 24-ի թիվ 11-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

2. «Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին անցկացվելիք փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում «Կազմակերպական պլանների կազմման կարգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Նշանյան/*

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ-ին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսովա/*

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից` 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Մարտիրոսովա/*

5. «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի նախագիծը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Դաշյան/*

6. «Արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի նախագիծը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Դաշյան/*

7. «Անհատական սպառումն ըստ նպատակների դասակարգչի նախագիծը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Դաշյան/*

8. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին

Հաղորդում` Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 2013 թվականի հուլիսի 3-ից 4-ը «Գյուղատնտեսական և գյուղական վիճակագրության կատարելագործման գլոբալ ռազմավարություն» ծրագրի նախագծի քննարկման նպատակով ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպված խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ.Անանյան, Ա.Ավագյան/*

9. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները-կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մարտի 24-ի թիվ 11-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի մարտի 24-ի «Անտառային տնտեսության մասին» ՁԵՎ ԹԻՎ 1-ԱՆՏԱՌ- (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 11-Ն որոշումը: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

*/Նորմատիվ/*

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին անցկացվելիք փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում Կազմակերպական պլանների կազմման կարգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ.Նշանյան/*

Որոշեցին՝

հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին անցկացվելիք փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում «Կազմակերպական պլանների կազմման կարգերը համաձայն հավելվածների»:

*//Անհատական/*

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Լսեցին՝

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ-ին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ-ին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

*/Անհատական/*

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Լսեցին՝

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

*/Անհատական/*

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Լսեցին՝

5. «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի նախագիծը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա. Դաշյան/*

Որոշեցին՝

հաստատել «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի» նախագիծը՝ համաձայն հավելված 1-ի և «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի» նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարին:

*/Անհատական/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Լսեցին՝

6. «Արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի նախագիծը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա. Դաշյան/*

Որոշեցին՝

հաստատել «Արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի» նախագիծը՝ համաձայն հավելված 1-ի և «Արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի» նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարին:

*/Անհատական/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Լսեցին՝

7. «Անհատական սպառումն ըստ նպատակների դասակարգչի նախագիծը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա. Դաշյան/*

Որոշեցին՝

հաստատել «Անհատական սպառումն ըստ նպատակների դասակարգչի» նախագիծը՝ համաձայն հավելված 1-ի և «Անհատական սպառումն ըստ նպատակների դասակարգչի» նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարին:

*/Անհատական/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Լսեցին՝

8. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին

Հաղորդում՝ Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 2013 թվականի հուլիսի 3-ից 4-ը «Գյուղատնտեսական և գյուղական վիճակագրության կատարելագործման գլոբալ ռազմավարություն» ծրագրի նախագծի քննարկման նպատակով ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպված խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ. Անանյան, Ա. Ավագյան/*

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ